

Տասնօրյա հետաքրքիր եւ լարված պայքարից հետո Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տան դահլիճում ավարտվեց պատանիների եւ աղջիկների Հայաստանի առաջնությունը, որին մասնակցեցին հարյուրից ավելի մարզիկ-մարզուհիներ:

Առաջնության արդյունքներն ամփոփում է շախմատի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ, տղամարդկանց Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆԸ:

- Այս մրցաշարը բոլորիս շատ ուրախացրեց. ցույց տվեց, որ շախմատը հանրապետությունում վերելք է ապրում, մենք տեսանք շատ նոր, իսկապես տաղանդավոր երեխաների, որոնց անունները, համոզված եմ, շատ մոտ ապագայում քաջածանոթ կլինեն մարզասերներին:

Անչափ ուրախալի էր 13-ամյա Կարեն Ասրյանի արդյունքը: Ինը հնարավորից վաստակելով ութ միավոր՝ նա նվաճեց մինչեւ 18 տարեկանների Հայաստանի չեմպիոնի կոչումը: Դա, իրոք, շատ բարձր արդյունք է:

Կրտսեր տարիքային խմբում, որտեղ Հայաստանի չեմպիոնի կոչումն էին վիճարկում մինչեւ 14 տարեկան շախմատիստները, գերազանց հանդես եկավ Անդրանիկ Մատիկոյանը: Նա փայլուն անցկացրեց ողջ մրցաշարը եւ ինը հնարավորից վաստակեց 8,5 միավոր: